վարներին, Եկեղեցիների հովվապետերին, հասարակական խոշոր գործիչներին՝ ուղղափառ հանրության կյանքում քրիստոնեական բարոյագիտության բարձր արժեքների հաստատման, Արևելյան քրիստոնեության միջավայրում պատմականորեն ձևավորված պետությունների տնտեսական եւ քաղաքական կապերի ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի համար:

Հունվարի 21-ին Մոսկվայի Սուրբ Ամենափրկիչ տաճարի եկեղեցական ժողովների սրահում Նորին Սրբություն Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ն, որ նաեւ Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, Վեհափառ Հայրապետին եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւին հանձնեց ուղղափառ աշխարհում հեղինակավոր այդ մրցանակը: Կիրիլ Պատրիարքի եւ հիմնադրամի նախագահ Վ. Ալեքսեեւի կողմից մրցանակներ շնորհվեցին նաեւ կինոռեժիսոր Էմիր Կուստուրիցային (Սերբիա) եւ Ս. Վլադիմիրի ուղղափառ հոգեւոր ճեմարանին (ԱՄՆ):

Պարգեւների հանձնման հանդիսավոր արարողության ընթացքում ներկաներին իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Շնորհակալություն հայտնելով Կիրիլ Պատրիարքի գլխավորած հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին՝ Նորին Սրբությունն իրեն շնորհած մրցանակը նկատեց իբրեւ վկայություն հավատակից երկու ժողովուրդների, Եկեղեցիների ու պետությունների բարեկամական հարաբերությունների:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մրցանակի գումարը փոխանցեց Երեւանում կառուցվող Ռուս Ուղղափառ Եկեղեցու հիմնադրամին:

Մոսկվա այցի ընթացքում Նորին Սրբությունը Կրեմլի Ս. Ասպվածածնի վերափոխման տաճարում ներկա գտնվեց նաեւ Կիրիլ Պատրիարքի կողմից մատուցված Ս. Պատարագին, որի ավարտին երկու Հովվապետերը հանդես եկան պաշտոնական խոսքով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՍԵՐԲ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ԳԱՀԱԿԱԼԻՆ

Հունվարի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Նիշի եպիսկոպոս Իրինեոսին՝ Պեչի արքեպիսկոպոս, Բելգրադի եւ Կարլովցի միտրոպոլիտ, Սերբ Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք ընտրվելու եւ գահակալության առիթով:

«Սուրբ Հոգու ներշնչմամբ եւ ի նշան Սերբ Ուղղափառ Եկեղեցում Ձեր օրի-

նակելի հոգեւոր առաջնորդության, Դուք ընտրվեցիք որպես Սերբիայի Եկեղեցու առաջին սպասավոր եւ կոչվեցիք առաջնորդելու մի ժողովրդի, որի պատմությունը հատկանշված է անսասան հավատարմությամբ առ Քրիստոս եւ բազում մարտիրոսներով», - ասվում է Հայրապետական շնորհավորագրի մեջ:

Նորին Սրբությունը վստահություն է հայտնել, որ միայն ջանքերի մեկտեղումով հնարավոր կլինի հաղթահարել ժողովուրդների առջեւ ծառացած դժվարությունները եւ մարտահրավերները: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորել է նաեւ միջեկեղեցական կապերի սերտացումը եւ միջկրոնական երկխոսության առավել խթանումը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ